«ՊՈԼՈԺԵՆԻԵՆԻ» ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Արևելյան Հայաստանը նվաճելուց հետո ցարական Ռուսաստանը սկսում է իրականացնել տարածաշրջանը պետական համընդհանուր կառավարման համակարգի մեջ ընդգրկելու ծավալապաշտական քաղաքականությունը: 1828թ. Թուրքմենչայի և 1829թ. Անդրիանոպոլսի պայմանագրերի ստորագրումից անմիջապես հետո, երբ արդեն լուծված էր ռազմաքաղաքական խնդիրը, գերխնդիր է դառնում տնտեսական, քաղաքական և մշակութային նվաճումը: Արևելյան Հայաստանը Ռուսաստանի տիրապետության ընդհանուր ոլորտ ներքաշելու համար առանձնահատուկ դեր և նշանակություն է ծեռք բերում Ամենայն Հայոց կաթողիկոսությունը, որը, ինչպես գրում է պատմաբան Լեոն,-«Իր էությամբ լինելով գերազանցորեն կրոնական հաստատություն, էջմիածինը իր վայելած համազգային դիրքի և նշանակության պատճառով հեշտ կարող էր յուրացնել իրեն և քաղաքական զորավոր դեր»[1]: Հայ եկեղեցին համայն հայության համար մեծ հեղինակություն ունեցող, անկախությունից և պետականությունից զրկված ժողովրդի ազգային միակ հենարանն էր, որ դեռ ի վիճակի էր համախմբել և միավորել տարբեր երկրներում ապրող հայ հատվածներին և հարևան պետությունների կողմից ընկալվում էր որպես հայ ժողովրդի հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչ: Ռուսական կառավարությունը կարևորելով հայ եկեղեցու համազգային նշանակությունը ձգտում էր «օգտագործել այդ աթոռի բարոյական հեղինակությունն ամբողջովին դարձնելով մի պարզ գործիք ռուսաց արտաքին քաղաքականության համար»:[2]: Կայսերական Ռուսաստանի և Հայոց եկեղեցու հարաբերությունները դրվում է նոր մակարդակի վրա պայմանավորված քաղաքական ուղղվածությամբ և առաջադրված պահանջներով: Ցարական կառավարության շրջանակներում շարունակաբար քննարկվում էր եկեղեցական լայնածավալ քաղաքականության իրականացման խնդիրներ: Այդ նպատակով 1817 թվականի հոկտեմբերին կազմավորվեց հոգևոր գործերի և ժողովրդական կրթության նախարարությունը: Յուրաքանչյուր երկրի, եկեղեցու քաղաքական առանձնահատկություններից ու հակասություններից ելնելով, տարբեր էին մոտեցումներն Արևելյան Հայաստանի, Վրաստանի և մահմեդական հոգևորականության նկատմամբ: 1801թ. սեպտեմբերի 12-ի հրամանագրով Ռուսական կայսրությանն է միացվում Արևելյան Վրաստանը Քարթլի-Կախեթյան թագավորությունը: Վրաստանի կաթողիկոսությունները լուծարվում են, փոխարենը ստեղծվում է էկզարխաթություն (ինքնուրույն մարզային ուղղափառ եկեղեցի), իսկ հոգևորական շերտը վերած-

վում է պետական գանձարանի կողմից վարձատրվող կայսերական աստիճանավորի: Վրացական ուղղափառ եկեղեցին կայսերական Ռուսաստանի համար, ներքին և արտաքին քաղաքականության մեջ, առանձին մեծ նշանակություն չուներ և հենց այդ նպատակաուղղված դրվածքն էլ մարմնավորվեց էկզարխաթության ստեղծման մեջ: Անդրկովկասում մահմեդական բարձրագույն հոգևորականության ղեկավար կենտրոնների բացակայությունը, Պարսկաստանի և Թուրքիայի կողմից կրոնական ազդեցությունը խոչընդոտում է ռուսական կառավարությանը լիակատար վերահսկողություն իրականացնելու Անդրկովկասի մահմեդական հոգևորականության նկատմամբ: Ռուսական կայսրությունը ստիպված էր հաշվի առնել Անդրկովկասի մահմեդական հոգևորականության վրա Պարսկաստանի ունեցած մեծ ազդեցությունը և իր իսկ պետական շահերից ելնելով, պահպանում է մահմեդական հոգևորականության ունեցած արտոնությունները: Կառավարությունը միայն մասամբ է վերահսկողություն հաստատում մահմեդական հոգեորականության վրա: Սակայն կայսրության որդեգրած մեծապետական քաղաքականության մեջ միանգամայն այլ դեր էր վերապահվում Հայոց եկեղեցուն, որը մեծ նշանակություն էր ձեռք բերում հատկապես արտաքին քաղաքականության մեջ: «Էջմիածնի աթոռի քաղաքական նշանակության պահպանության անհրաժեշտությունը Թուրքիայի և Պարսկաստանի հայության համար, համայն հայության հոգևոր առաջնորդի ընտրության նրանց մասնակցության հնարավորությունը, պայմանավորեց հրաժարվելու վրացական փորձից»,[3]-գրում է պրոֆեսոր Վ.Գ.Թունյանը: Արևելյան Հայաստանի ազատագրության գործում Ս.Էջմիածնի անձնվեր մասնակցության դիմաց, Ռուսական կառավարությունը պահպանեց քաղաքական մեծ կշիռ ունեցող կաթողիկոսի դիրքը և Հայոց եկեղեցու սեփականության անձեռնմխելիությունը: Հաշվի առնելով Հայոց եկեղեցու համազգային նշանակությունը, հայ հոգևորականության ունեցած անգնահատելի ներդրումն Արևելյան Հայաստանի ազատագրման գործում կառավարությունը վարում էր երկդիմի և զգուշավոր քաղաքականություն: Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ավարտից հետո,Կովկասի կառավարչապետ Ի.Պասկևիչը կայսրության մեծապետական քաղաքականության իրականացնող ու ջատագովը, հալածանքներ է սկսում և Ներսես Աշտարակեցու, և նրա կողմնակիցների դեմ: Ռուսաստանի հոգևոր գործերի նախարար Դ. Ա. Բլուդովին ուղղված մի գրության մեջ գրում է. «Հարկ եմ համարում ծանուցանել, որ մինչև հիմա էջմիածինի պատրիարքը եղել է գլուխ ոչ միայն հոգևորականության, այլև ընդհանուր Հայոց ազգի, նույնիսկ քաղաքական կառավարության մեջ, և պարսից տերությունը հայերին վերաբերվող բոլոր դեպքերում միշտ գործել է պատրիարքի ձեռքով: Բացի սրանից ռուսաց տերությանն այնպիսի անձ է հար-

կավոր, որ չարգելեր այս երկրի մեջ կարգ ու կանոն մտցնելուն»[4]: Ցարական կառավարությանը հայտնի էր Ներսես Աշտարակեցու և հայ մի շարք գործիչների մտադրությունները Պարսկաստանի տիրապետությունից ազատագրված Արևելյան Հայաստանում հայկական թագավորություն հիմնելու մասին: Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միավորվելուց անմիջապես հետո Ներսես Աշտարակեցին անմիջապես հեռացվեց և աքսորվեց Բեսարաբիա: 1828թ. Նիկոլայ կայսեր հրամանով, ըստ որի «Կայսերը գտնում է, որ արքեպիսկոպոս Ներսեսի ներկայությունն ազատագրված մարզում և առհասարակ Կովկասում կարող է ունենալ վնասակար քաղաքական հետևանք, և այդ իսկ պատճառով կարևոր է համարում ամենահարմար առիթով հրավիրել Ռուսաստան և թողնել բնակության, նշանակելով հավուր պատշաճի կարողություն և պարգևներ»[5]: Կառավարության կողմից ձեռնարկվեցին քաղաքական քայլեր, որոնք ուղղված էին էջմիածնի մասնակցությունը նվաճված Արևելյան Հայաստանի վարչաքաղաքական գործերում բացառելու, կաթողիկոսական իրավունքները սահմանափակելու և հայ եկեղեցու ներքին գործերը վերահսկելու, պետական միջամտության ուժեղացմանը: 1828թ. դեկտեմբերին 25-ին կայսերը հաստատում է կառավարության կարծիքը, որը ներկայացված էր արտաքին գործերի նախարար կոմս Կ.Վ. Նեսելրոդեյի զեկուցման մեջ «Ըստ կամաց Ձերդ Մեծութեան, ստատս-սէկրէտար(Ռուսաստանի հոգևոր գործերի նախարար(ընդգծումն իմն է.Հ. Մ)) Բլուդովը հաղորդեց ինձ կոմս Պասկևիչի գրությունը նախ Ներսես արքեպիսկոպոսի տեղափոխելու մասին, և երկրորդ թէ կարևոր է էջմիածնի Հայոց գլխավոր հոգևոր վարչության համար կանոնադրութիւն սահմանել: Ես կարդացի նմանապես եփրեմ պատրիարքի բարձրագույն անուն Ձերդ Մեծութեան գրուած նամակը: Այս առարկանների վերաբերութեամբ մենք համաձայնեցինք նախ ժողովել բոլոր այն տեղեկութիւնները, որ կարելի կլինի գտնել արտաքին գործոց նախարարութեան դիւանում, և ապա երկուսս միասին որոշենք միմիայն ընդհանուր սկզբունքները, որոնց վրայ պիտի հիմնուի էջմիածնի գլխաւոր հոգևոր վարչութիւնը: Այսուամենայնիւ մենք կարևոր ենք համարում Ներսէս արքեպիկոպոսին քաղաքավարի պատճառաբանութեամբ թողնել Բեսարաբիայում և արքուն հսկողութիւն ունենալ նորա նամակագրութեանց մասին ...»[6]: Կարծում ենք, որ նոր գրավված տարածքներում իրականացվում էր մեծապետական քաղաքականություն և անձնական գործոնն, առանձին անհատների փոխհարաբերությունները չէին կարող որոշիչ դեր խա.լալ. ազդել քաղաքական դեպքերի ընթացքի զարգացման վրա, ինչպես գրում է Ալ.Երիցյանը.— «Այսպէս ահա Պասկևիչի և Ներսէսի անձնական յարաբերութեանց պատճառով յառաջ եկաւ Հայոց եկեղեցւոյ վարչութեան բարեկարգութեան խնդիրը և կոմսի նշանակած վերոյիշեալ գաղտնի կոմիտէտը

ծրագրեց այն կանոնադրութիւնը, որ յետոյ հաստատուեցաւ «Պօլօժենիէ» անունով»[7]: Մինչդեռ Հայ եկեղեցական նոր կանոնադրության ստեղծումը, կառավարության կողմից իրականացվող քաղաքական ծրագրի մի մասն էր: «Երբ 1801թ ռուսական իշխանությունը հաստատուեցավ Վրաստանում,- գրում է Ալ. Երիցյանը. - իսկույն քաղաքական վարչությունը Հայաստանայց եկեղեցոյ կառավարութեան և դրութեան մասին տեղեկություններ սկսեց ժողովել»[8]: Հայոց հոգևոր վարչության մեջ կարգ ու կանոն հաստատելու համար, Կովկասի կառավարչապետ Ի. Պասկևիչը յոթ կետից բաղկացած իր առաջարկություններն է ներկայացնում կառավարությանը, որտեղ մասնավորապես ասվում է.«Այժմ ծեռնամուխ լինել Հայոց եկեղեցու գլխավոր և դրական սահմանադրություն կազմելու, ճշտությամբ որոշել, թե որոնք են պատրիարքի, սինոդի, և վիճակավոր եպիսկոպոսների իրավունքները և սահման դնել ամենքի իշխանությանը: Իմ կարծիքով, ամենևին չպետք է ժամանակ կորցնենք այս մասին մի ընդհանուր կանոնադրություն կազմելու համար...»[9]: Ծրագրվում է ստեղծել Հայկական եկեղեցական կանոնադրություն ռուսական կառավարության թելադրած պայմաններով և կառավարության վերահսկողությամբ, առանց հակասելու կայսրության վարած մեծապետական քաղաքականությանը: Բարեբորոգումների անհրաժեշտությունը բխում էր նաև կայսերության պետական շահերից և կոչված էր հստակեցնելու ռուսական կայսրությանն արդեն հպատակ Հայոց եկեղեցու իրավունքները: 1831 թվականին, Կովկասի կառավարչապետ Ի. Պասկևիչին փոխարինած բարոն Ռոզենը գրում է Պ.Ա.Բլուդովին. — «Կարևոր է մի «պօլօժենիէ» կամ կանոնադրութիւն Հայոց եկեղեցոյ կառավարութեան մասին Անդրկովկասում, որ կարողանար օրինական պարտաւորութեանց սահմանների մէջ զսպած պահել որպէս կաթողիկոսին, նոյնպէս և էջմիածնական հոգևորականութեան միւս դասակարգերը»:[10]: Հայոց եկեղեցական կանոնադրության մեջ կարգ ու կանոն հաստատելուն վերաբերվող հոդվածներում էլ արտահայտվում է պետական միջամտությունը, որը կարևորելով, Կ Պոլսի նախկին պատրիարք, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը գրում է.- «Եկեղեցական իշխանութիւնները լոկ բարոյական միջոցներ ունենալուն, և կարգապահութիւնն ու բարեկարգութիւնը բռնադատիչ միջոցներու ալ պէտք ունենալնուն, յաճախ օգտակար եղած է և կ՚ըլլայ պետական միջամտութիւնը, նոյն իսկ եկեղեցական գործողութեանց մեջ»[11]: Ռուսական կայսրության մեջ պետության և Հայոց եկեղեցու միջև հարաբերությունները կանոնակարգելու, եկեղեցին միապետության պահանջներին համապատասխանեցնելու այս ծրագրային դիտավորություններն եկեղեցական նոր կանոնադրության մեջ ընդգրկելու համար, Կովկասի կառավարչապետ Ի.Պասկևիչը 1830 թվականին Թիֆլիսում կազմակերպում է գաղտնի հանձնաժողով: 1829 թ.

դեկտեմբերին Ի.Պասկևիչը գրում է նախարար Բլուդովին. «Դեկտեմբերի 26-ի գրութեամբս պատիվ ունեցայ, ի թիւս այլոց, հաղորդել Ձեզ Հայոց եկեղեցոյ գործերի վարչության մեջ բարեկարգութիւն մտցնելու նախագիծը կազմելու համար ես ես հիմնեցի մի առանձին գաղտնի կոմիտետ (յանձնաժողով): Այս կոմիտետում ես անդամ նշանակեցի չորսին, որք են գեներալ- մայեոր իշխան Բէհբութովը, Հայոց վարդապետ Սերովբէն, Հայոց գրականության պրոֆեսոր Սիրբիդը (Cirbied-Զրպետեան) և կոլլեժսկի ասսեսոր Օչկին, որը միաժամանակ կլինի և գործերի կառավարիչը»[12]: Ի.Պասկևիչի լիակատար վստահությունը վայելող այս հանձնաժողովը պատրաստվում է առանց Եփրեմ կաթողիկոսի գիտության և մասնակցության ստեղծել և Հայոց եկեղեցուն պարտադրել կանոնակարգ.որ այդքան մեծ նշանակություն ուներ Հայոց եկեղեցու հետագա ճակատագրի համար: Պատմական նյութերը Հայոց եկեղեցու մասին, որ ուղարկել էր արտաքին գործերի նախարարությունը սխալ և հակասական տեղեկություններ էին պարունակում, քանի որ վերցված էին XVII դարի կաթոլիկ քարոզիչների հրատարակություններից: Ներսես կաթողիկոսը, ծանոթանալով Հայոց եկեղեցու էության, վարչական օրենսդրության մասին ռուսական կառավարության ունեցած այդ ձեռագրերի գրաբար լեզվով թարգմանություններին, դրանց վրա մակագրում է. «Տեղեկութիւնք վասն կաթողիկոսաց և պատրիարգաց Հայոց կարօտ մաքրութեանց»[13]: Թիֆլիսի հանձնաժողովի նախագիծը, Պետերբուրգում կառավարության կողմից հավանության չարժանացավ, որովհետև, ինչպես գրում է Ալ. Երիցյանը. «պատրաստուած լինելով օրէնսգիտութեանն անհմուտ անձանց ձեռքով, միանգամայն զուրկ էր դրական օրէնքի յատկություններից: Դա ոչ միայն թերի էր և անկատար, այլև իւր էական մասերում չէր համապատասխանում ոչ մեր եկեղեցւոյ վարչական հոգւոյն և ոչ նոյն իսկ Բարձրագոյն իշխանութեան ցանկութեանց ու ձգտումներին»[14]: Թիֆլիսի նախագիծն իր առանձին կետերով խիստ սահմանափակում էր կաթողիկոսի իրավունքները, նրան կախման մեջ դնում Ս. էջմիածնի ծայրագույն խորհրդից (Սինոդից), մինչդեռ. «Պետերբուրգում քաղաքական նպատակներով ցանկանում էին բարձրացնել էջմիածնի կաթողիկոսի նշանակութիւնը և պահպանել նորա հնաւանդ արտօնութիւնները».[15] Անբավարար և թերի համարելով Թիֆլիսյան հապճեպ կազմված նախագիծը, կայսեր հրամանով Պետերբուրգում ներքին և արտաքին գործերի նախարարության կողմից կազմվում է նոր հանձնաժողով, որը պետական բարձրագույն հաստատությանը վայել աչալրջությամբ և պատասխանատվությամբ, ձեռնամուխ եղավ նոր կանոնադրության ստեղծմանը, որն այնքան էլ հեշտ գործ չէր. Հայոց եկեղեցու մասին ստույգ և անհրաժեշտ տեղեկությունների բացակայության պատճառով «Ասոր հակառակ կաթողիկոսարանը առձեռն կանոնագիրք մը չունէր

ներկայանալու, որով եւ վրան պնդելու հիմ ալ չուներ»[16].- գրում է Մ. Օրմանյանը: Եկեղեցական կանոնակարգի ստեղծման աշխատանքը, որը ռուսական կառավարությունից պահանջում էր մեծ զգուշություն և օրենսդրական ձեակերպումների ճկունություն, տևեց գրեթե չորս տարի: Ալ. Երիցյանը և Մ. Օրմանյանը Պետերբուրգյան հանձնաժողովի կազմած այս նոր կանոնադրությունը հոգուտ եկեղեցու են համարում: 1836 թ. մարտի 11-ին Նիկոլայ Առաջին կայսր հրամանով հաստատվեց և կյանքի կոչվեց «Պոլոժենիեն Բարձրագույն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց Լուսավորչական Հայոց եկեղեցւոյի Ռուսաստան» վերնագրով: Եկեղեցական այս նոր կանոնակարգը ուներ կրոնական, լուսավորչական բովանդակություն: Լեռն, «Պոլոժենիեն» դիտարկելով որպես ազգային–մշակույթային ինքնուրույնության հաստատում գրում է.- ««Պոլոժենիինիեն» միայն եկեղեցական կանոնադրության կանոնագիրք չէր, այլ դրանից ավելին, Ռուսաստանի սահմաններում ապրող հայության ազգային–կուլտուրական ինքնորոշման առանձնաշնորհում: *Ռուսաստանի աստվածապետական -բռնակալական հասարակարգի մեջ, չեյին* կարող լինել առանձնապես ճանաչված ազգություններ, վորոնք իրավունքներ ունենային իբրև այդպիսիներ»[17]: Հայոց եկեղեցուն շնորհվեց ազգային–մշակույթային ինքնուրույնության իրավունք, դպրոցական կրթության մենաշնորհ, թեև. «դրված կրոնավորական դիկտատուրայի կարգադրության տակ, տոգորված ամբողջովին կրոնով և եկեղեցականությամբ»[18]: Հայ եկեղեցու նոր կանոնադրության ստեղծման և բարենորոգման անհրաժեշտության հարցը վաղուց էր հասունացել հայ հասարակական շրջանակներում: Բնականաբար ռուսական կայսրության կողմից հաստատված «Պոլոժենիան» որոշ իմաստով բխում էր նաև հայ եկեղեցու ներքին բարենորոգման անհրաժեշտությունից,«Հայոց անիշխանության ժամանակները, մանավանդ վերջին դարերում,- գրում է Ալ.Երիցյանը,- Հայաստանյայց եկեղեցու կառավարությունը վերին աստիճանի անկանոն և անկարգ ընթացք էր բռնած: Կաթողիկոսը եպիսկոպոսների հետ, եպիսկոպոսները քահանաների հետ իսկ սոքա ժողովրդականաց հետ -ամենքն էլ վարվում էին ավելի նահապետական և հայրական իրավունքով, քան թե եկեղեցական օրինաց համեմատ: Կաթողիկոսը պատժում էր կամ պարգևում ըստ քմավ և ճաշակին, առանց որևէ սահմանադրական օրենսդրութեան, և այդ կամքին հոգևորականները միակերպ հնազադում էին,որովհետև կաթողիկոսը իրենց Գլուխը և Հոգևոր հայրն էր»[19]: Սակայն Ռուսական կայսրության հիմնական քաղաքական միտումը Հայոց եկեղեցական կանոնադրությունում ռուսական ուղղափառ եկեղեցուց ներմուծած սինոդի միջոցով եկեղեցական վարչության մեջ պետական ազդեցության շեշտադրություն էր: Այդ առիթով Ն.Ֆ.Լինչը գրում է, «Պոլոժենիան» կը շեշտէ եւ կը նդարձակէ այս

մարմնին (Սինոդին) սահմանադիր իշխանութեան կարեւորութիւնը, եւ զայն կը դնէ Կայսեր պատուակալ նախագահութեան տակ: Սինոդին հրամանագիրները սապէս կը սկսին. «Ռուսիոյ կայսեր հրամանով...»:[20]: Ըստ «Պոլոժենիենի» խորհրդարանի կամ սինոդի կողմից կանոնակարգվում և սահմանափակվում էր կաթողիկոսի բացարձակ իշխանությունը, իսկ այդ հարցը բարձրացվել էր 1780 թվականին Կ Պոլսի Ջաքարիա պատրիարքի և Ղուկաս կաթողիկոսի, որը «շատ նախանձախնդիր էր Սայր Աթոռի գերագոյն իրավունքների պահպանության»[21], միջև եղած հակասությունների ժամանակ: Կանոնակարգվում էր կաթողիկոսի ընտրությունը, վերջ տալով այնպիսի իրավիճակների, երբ կաթողիկոսի ընտրության հարցը դուրս էր գալիս եկեղեցական շրջանակներից քաղաքական և դիվանագիտական պայքարի առարկա դառնում, ինչպես դա եղավ Դանիել -Դավիթ հակամարտության ժամանակ: Ռուսական կառավարության կողմից հայ եկեղեցուն պարտադրված եկեղեցական նոր կանոնակարգը լայն արձագանք գտավ և ոչ միանշանակ ընկալվեց հայ իրականության մեջ ժամանակի ազգային գործիչների կողմից արժանանալով տարբեր գնահատականների: Դեռևս հնագույն ժամանակներից հայ եկեղեցին կառավարման առումով ինքնուրույն ազգային եկեղեցի էր: Հայրենիքից դուրս հաստատված, ազգային ինքնագիտակցության եկած և կազմակերպված հասարակական ուժ ներկայացնող հայ վաճառականությունը և բուրժուազիան չէին կարող հանդուրժել ռուսական կառավարության կողմից արված ցանկացած ոտնձգություն և միջամտություն հայ եկեղեցու, որպես միակ ազգային հաստատության, ներքին գործերում և կանոնակարգում: Տարբեր երկրների գաղթահայության շրջանում «Պոլոժենիեն» հայ եկեղեցական ազգասիրական տեսակետից ապազգային օրենք էր, որովհետև Հայ եկեղեցուն զրկում էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից, և Հայոց կաթողիկոսը ստիպված էր սփյուռքահայության հետ հարաբերությունները պահպանել ռուսաց արտաքին գործերի նախարարության միջոցով: «Էջմիածնի ծեռք բերիլը,- գրում է Ալ. Երիցյանը,- չէր նմանիլ սովորական աշխարհակալութեանց, որովհետև էջմիածինն ընդհանուր Հայոց ազգի սիրտն է, և ում ձեռքին է այդ սիրտը, նա բարոյապես տիրապետում է ամենուրեք ցրուած հայերի վրայ»:[22]. 1836 թ. ռուսաց կառավարության կողմից ընդունված «Պոլոժենիեն» Հայ եկեղեցիուն զրկեց աշխարհիկ գործառույթներից: «Սիա այս գործելակերպով -գրում է սփյուռքահայ քաղաքական գործիչ Գաբրիել Լազեանը.— աւելի դիւավ ռուս իշխանութիւնը կրնար խեղդել հայ ժողովրդի ազգային բաղձանքները, որոնք պիտի ներկայացունէին հայ եկեղեցական կազմակերպութեան խողովակով: Ռուսները միշտ աշխատեցան այդ կարեւոր ազդակը օգտագործել իրենց պետական շահերուն համար, սակայն բախուեցան հայ ժողովուրդի տեւական

ընդիմութեան»[23]: Արտասահմանի հայությունը, կաթողիկոսի իշխանության անսահմանափակ իրավունքները վերականգնելու համար, տարիներ շարունակ պայքարում էր սրբագրելու «Պոլոժենիեն»: XIX դարի 60-ական թվականներին Մատթեոս կաթողիկոսին կառավարության կողմից հնարավորություն է տրվում «Պոլոժենիեն» վերաքննելու և հայ ժողովրդի կողմից առաջարկվող փոփոխություններ ձևակերպելու համար: Սակայն Մատթեոս կաթողիկոսի ներկայացրած նախագիծը, որտեղ կաթողիկոսը իր չափազանց անկախ քաղաքական դիրքով ներկայանում էր մի թագավորություն թագավորության մեջ, ռուսական կառավարությունը մերժեց նույնիսկ քննության առնել: Հետագայում Ալեքսանդր Երրորդ և Նիկոլայ Երկրորդ թագավորության, ցարական ռեակցիայի մռայլ շրջանում «Պոլոժենիեն»-ով Հայոց եկեղեցուն տրված իրավունքները համարվեցին չափազանց ազատամիտ և արտոնյալ: «Ահա այս շրջանում,- գրում է Լեոն,- հայերն արդեն ոչ միայն չէին մտածում Պոլոժենիենի վերաքննության մասին, այլև համարում էին այդ վերաքննությունը կատարյալ խորտակում իրենց ազգային իրավունքների»[24]: Միջազգային մեծ հեղինակություն ունեցող կաթողիկոսի իշխանությունը տարածվում էր տարբեր պետությունների հայ գաղթօջախների վրա, իսկ 1836թ. հաստատված «Պոլոժենիան», պահպանեց հայ եկեղեցու միջազգային դերը և իր համազգային նշանակությունը, ինչպես գրում է Լեոն «Հայոց կաթողիկոսության միջազգային հանգամանքը նա դնում էր ավելի լայն հիմքերի վրա, տրամադրելով, վոր կաթողիկոս ընտրվի վոչ միայն ռուսահայերի, այլև թյուրքահայերի, պարսկահայերի և հնդկահայերի քվեներով և այս նպատակով աշխարհական և հոգևորական պատգամավորներ պիտի ամեն տեղերից գային եթսիածին ընտրության անձամբ մասնակցելու համար»[25]: Յուրաքանչյուր եկեղեցու ինքնուրույնությունն արտահայտվում է նրա դավանաբանական և ծիսական առանձնահատկությունների մեջ Այս իմաստով, կարծում ենք, որ «Պոլոժենիեն» չէր սպառնում հայ եկեղեցու ինքնուրույնությանը, այլ միայն եկեղեցական նոր կանոնակարգ էր, որի միջոցով Կայսերական Ռուսաստանն արտահայտում էր իր սեփականատիրոջ իրավունքով սեփական տանը կարգ ու կանոն հաստատելու պահանջը: Ռուսական ուղղափառ եկեղեցին ըստ էության ընդգրկված էր պետական համակարգի մեջ, և եկեղեցական վերնախավը միայն եկեղեցուն վերաբերվող հարցերում էր ինքնուրույն, իսկ արդեն 1721 թվականին Պետրոս Առաջինի կողմից իրականացված եկեղեցական բարեկարգություններով ռուսական ուղղափառ եկեղեցին վերածվեց պետական հիմնարկության և ղեկավարվում էր առանց պատրիարքի, բարձրագույն օրգանի Սինոդի կողմից, որի անդամները ընտրվում էին կայսեր կողմից և վերջնականապես ենթարկվում էր պետությանը: Կարծում ենք միանգամայն տեղին է Մ.Օրմանյանից այս մեջբերումը. «Արդէն որթոտոքս

եկեղեցւոյն սկզբունքն է եկեղեցական իշխանութիւնը պետական իշխանութեան ենթարկեալ նկատել, եւ կրօնական ու քաղաքական յարաբերութեանց գերագոյն վարիչ պետութիւնը ճանչնալ. բնական էր որ նոր եկեղեցական իշխանութեան մը իւր սահմաններուն մէջ մտած ատեն, անոր վրայ ալ տարածել ուզէր իւր սկզբունքը»[26]: «Պոլոժենիայով» Ռուսահայքը բաժանվում է Բեսարաբիայի և Նոր Նախիջևանի, Աստրախանի, Երևանի, Վրաստանի, Շիրվանի վիճակ և Ղարաբաղի թեմերի: «Պոլոժենիեն» կազմված էր 141 հոդվածներից, որոնք ամփոփված էին 10 գլուխների մեջ: Հոդվածները վերաբերվում էին եկեղեցականների իրավունքներին և արտոնություններին, սինոդին, թեմական առաջնորդներին, հոգևոր ատյաններին, կառավարության, եկեղեցական պաշտոնյաների եկամուտներին, հոգևոր դպրոցներին: Այս կանոնադրությամբ թեև կաթողիկոսը ճանաչվում էր Հայոց եկեղեցու գլուխ, սակայն նրա իրավունքները սահմանափակվում էր ութ անդամներից կազմված Սինոդի կողմից: Սինոդի գործերի ընթացքը դրված էր սենատի կողմից նշանակված պաշտոնիայի պրոկուրորի հսկողության տակ: Կաթողիկոսները եղել են ընտրովի, և նրանց ընտրության հատար մշակված էր ընտրության յուրատեսակ կարգ: Նախկինում Երևանի խանության աշխարհիկ և հոգևոր ներկայացուցիչների կողմից առաջադրված կաթողիկոսի թեկնածուն ներկայացվում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքի գլխավորությամբ գումարվող ժողովում, որից հետո ստացվում էր սուլթանի հաստատության բերաթը: Այսպիսով վճռական խոսքը պատկանում էր Կ.Պոլսի հոգևորականությանը և «իշխաններին»: Շատ անգամներ կաթողիկոսի ընտրության հարցը տարաբնույթ հակասությունների և լարվածության տեղիք էր տալիս Կ. Պոլսի հոգևորականության և Ս.Էջմիածնի միջև, սակայն «Եջմիածինը գրավելուց հետո այդ իրավունքն անցնում էր միայն ռուսաց ցարին.վորովհետև ամենայն հայոց կաթողիկոսությունը, ունենալով հանդերձ միջազգային իրավասություն, համարվում էր ռուսական ներքին հիմնարկություն և ինքը կաթողիկոսն էլ, յեթե ընտրվեր անգամ դրսից, ռուսաց հպատակ էր»[27]: Հայոց կաթողիկոսն էր տնօրինում հոգևոր և մշակութային հարցերը: Դարեր շարունակ ծայրագույն Պատրիարքի և Կաթողիկոսի իշխանությունը հանդես էր գալիս որպես եկեղեցական հիմնարկություն, իսկ դարասկզբին ստեղծված Սինոդը վարչական հիմնարկություն էր, որի իշխանությունը սահմանափակվում էր կայսրության սահմաններով: Կաթողիկոսի վերահսկողությամբ Սինոդը զբաղված էր դատաստանական և վարչական հարցերով: Հետագայում, 1843 թվականին կաթողիկոս ընտրված Ներսես Աշտարակեցու ժամանակ, Սինոդը մատնված էր անգործության և հենց ինքը Ներսես կաթողիկոսն էր բացասաբար արտահայտվում իր իսկ կողմից ստեղծված Սինոդի գոյությանը: Ռուսական կայսրության սահմաններում Հայաստանի

ինքնավարության և «Հայկական թագավորության» վերականգման ծրագրերը մատնվեցին անհաջողության: Պատմական նոր շրջադարձի պայմաններում հայ ազգային -ազատագրական շարժման քաղաքական գործիչների առջև դրվեց նոր ժամանակի ոգուն և պահանջներին համապատասխան խիստ կոնկրետ խնդիրներ: Հայ ազգային ազատագրական շարժման մեջ կարևորվում է ազգի լուսավորության և կրթության գործը, ազգային ինքնագիտակցության վերածնության գաղափարը: Հայոց եկեղեցու, որպես ազգային-քաղաքական կենտրոնի, կառավարման բարեկարգման, նոր ժամանակաշրջանին հարմարեցման հարցը հրամայական անհրաժեշտություն է դառնում: «Հայաստանի քաղաքական գոյավիճակը — գրում է պրոֆեսոր Վ.Դիլոյանը.—պետք է թելադրեր էջմիածնի միաբանությանը և հայ ժողովրդի ղեկավար շերտերին վարել խիստ զգուշավոր քաղաքականություն, որպեսզի վտանգավոր կացության մեջ չդրվեր այն միակ համազգային հաստատությունը, որը շաղկապում էր ցանուցիր հայ ժողովրդին և որը կարողացել էր պահպանել իր գոյությունը փոթորկալից աղետաբեր դարերի բովով անցնելուց հետո»[28]: Հայոց լեզուն ժողովրդի գոյատևման, ազգային դեմքը պահպանելու երաշխիքն է: Հայ հոգևորականության և ժողովրդի միջև շփման լեզուն մնում էր հայերենը, այս իմաստով Հայոց եկեղեցին հանդիսանում էր հայոց լեզվի պահապանը, ինչպես Լեոն է գրում. — «Հասարակական կյանքի մեջ այդ ազգային լեզուն այն իրավունքն ուներ, վոր միանգամայն արգելված մի բան չեր, ուստի և նրա ազատ շրջակայման համար համայնքի ներսում թույլատրված եր նրան ունենալ տպագրություն, վոր միայն յեկեղեցու պետքերին չեր ծառայում, այլ և աշխարհական պահանջներին: Այսպիսով, ուրեմն յեկեղեցին պահպանում եր ազգային լեզուն դաստիարակության գործիք դարձնելու իրավունքը, կամ ուրիշ խոսքով, դպրոցի տեր եր դառնում, ինչպես եր և անցյալում: Ամենակարևորը, ամենակենսականն այս եր»:[29]

«Պոլոժենիան» պահպանեց Հայոց եկեղեցու, որպես համազգային միակ հաստատության նշանակությունը, և կաթողիկոսի դիրքը, որքանով այն բխում էր ռուսական կայսրության քաղաքական նկատառումներից: «Այդ նպատակով, -գրում Լեոն.- պետք եր ներքուստ վորոշ աստիճանով բարձրացնել կաթողիկոսական աթոռի նշանակությունը, տալով նրան իշխանական դիրք և արտոնություններ, վորքանով այս իհարկե, կարող եր թույլատրել պետական տիրող և գերակշռող կրոնը հանձին պրավոսլավ կղերի»[30]:

Գրականության ցանկ

1. Լեո. Երկերի ժողովածու.հ.4-րդ. Երեւան 1984. էջ 49
2. Լեո. Հայոց պատմություն.Նորագույն շրջան. Երեւան 1927. էջ 489 :
3. В.Г. Гулиан. Очерки церковно-политической истории Армении конца XIX – нач. XXвв. Ереван 2001, ст. 7
4. АКАК, т. VII, N 214
5. В.Г. Гулиан. Церковная политика самодержавия в Закавказье I и XIXвека. Ереван 2001, ст. 42
6. Ալ. Երիցյան. Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX-րդ դարում. մասն Ա. Թիֆլիս. 1895. էջ 487:
7. Ալ. Երիցյան. Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX-րդ դարում.մասն Ա Թիֆլիս. 1895. էջ 545
8. Ալ. Երիցյան. Ներսես եպիսկոպոսը Դանիել կաթողիկոսի ժամանակ. Թիֆլիս. 1899. էջ 7
9. АКАК, т. VII, Тифлис, 1876, N 214.
10. Ալ. Երիցյան. Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX-րդ դարում. մասն Բ. Թիֆլիս. 1895. էջ 226:
11. Մ.Օրմանյան. Ազգապատում. Բեյրութ 1927.էջ 3698:
12. Ալ. Երիցյան. Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX-րդ դարում. մասն Բ Թիֆլիս. 1895. էջ 334.
13. Ալ. Երիցյան. Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX-րդ դարում.մասն Բ. Թիֆլիս. 1895. էջ 302:
14. Ալ. Երիցյան. Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX-րդ դարում.մասն Բ. Թիֆլիս. 1895. էջ 375:
15. Ալ. Երիցյան. Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX-րդ դարում.մասն Բ. Թիֆլիս 1895. էջ 375:
16. Մ Օրմանյան. Ազգապատում.Բեյրութ 1961. էջ 3675 :
17. Լեո. Հայոց պատմություն.Նորագույն շրջան. Երեւան 1927. էջ 264:
18. Լեո. Երկերի ժողովածու.հ 4-րդ. Երեւան 1984. էջ 491:
19. Ալ. Երիցյան.Նյութեր Ներսես Ե-ի կենսագրության համար. Թիֆլիս. 1899. էջ 6:
20. Ն.Ֆ.Լինչ.«Հայաստան» . թարգ. Լ. Լարենց. Կ Պոլիս. 1913.էջ 163:
21. Կ.Եզեանց. Ս Էջմիածնի Մայր Աթոռի և Ռուսաց կառավարութեան յարաբերութիւնների ծագումը. Թիֆլիս 1904. էջ 13:
22. Ալ. Երիցյան. Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX-րդ դարում.մասն Բ. Թիֆլիս. 1895. էջ 379:
23. Գ Լազեան. Հայաստանը և հայ դատը.Երեւան. 1991. էջ 10:
24. Լեո. Երկերի ժողովածու.հ.4-րդ. Երեւան 1984. էջ 493:
25. Լեո. Հայոց պատմություն.Նորագույն շրջան. Երեւան 1927. էջ . 268:
26. Մ. Օրմանյան. Ազգապատում.Երուսաղեմ 1927. էջ 3675:
27. Լեո. Հայոց պատմություն.Նորագույն շրջան. Երեւան 1927. էջ 269:
28. Վ Դիլոյան. Արեւելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները. Երեւան 1989. էջ 212:
29. Լեո. Հայոց պատմություն.Նորագույն շրջան. Երեւան 1927. էջ 266:
30. Լեո. Հայոց պատմություն.Նորագույն շրջան. Երեւան 1927. էջ 263: